

11 Չորոյ անմիտ վարդապետութիւն զխորամանկ ուսուցչին Միհրներսէ-
հի լուեալ խելացնոր աշակերտ նորա¹ Վարազվաղան՝ չկարաց զգալ յապ-
շութենէ սատանայազէն պղտորեալ մտացն, եւ առնել անդրէն պատասխա-
նի անզգայեալ վարդապետին, թէ «Աստուած, որ ինքն յինքեան պակաս է եւ
թերակատար, զիա՞րդ կարէ տալ այնպիսին այլում զկատարելութեան
խնդիրս: 12 Զանզի զգոյսն իւր ոք կարէ տալ խնդրողին. իսկ որ ինչ իւր ոչ
զոյ ուրութ, այլ որպէս մասն ինչ ի բազում մասանց յումեթէ առեալ ունիցի
յանձին՝ կարէ տալ յայնմ մասնէ զոր ինչ ունի. իսկ զոր ինքն ոչ ունի՝ յայտնի
է թէ եւ այլում շնորհել զայն ոչ կարէ: 13 Վասն զի թէ տապացեալ ոք կարաւ-
տեսցի զովանալոյ, եւ մատուցեալ զայն խնդրեսցէ դարձեալ ի ջերմութենէ՝
չպատահէ խնդրոյն. այլ եւ խնդրողն յոյժ անմիտ ճանաչի յամենեցուն² եւ
արժանի ծաղու: 14 Զանզի եւ նոյն ինքն խնդրողն հաւաստեալ գիտէ, թէ որ
ինչ ինձս պիտի, յորմէ կամիմն խնդրել՝ նորա չիք, եւ ոչ տալ կարէ. եւ բազում
թախանձանաւք³ եւ յերկար դեգերմամբ խնդրեսցէ յայնպիսոյն՝ անմիտ է եւ
լի է ապաշաւութեամբ. որպէս թէ ի ջրոց ոք խնդրիցէ ցամաքութիւն, եւ ի
հրոյ հայցիցէ ոք գիծութիւն, եւ կամ զարեգակն աղաչեսցէ ոք յաղագս զովա-
ցուցանելոյ, եւ կամ ի գիշերոյ պահանջեսցէ ոք լոյս: 15 Այլ զեղեալն ի նոսա
յԱստուծոյ մասունս՝ կան եւ ունին, սահմանեալ զնոյն եւ մատակարարեալ
ըստ իւրաքանչիւր մասին, հարկաւորին անդադար հատուցանել աշխարհի,
ոչ իւրեանց կամաւ, այլ ըստ հրամանի Արարչին իւրեանց, որ էն Աստուած
ճշմարիտ, արարիչ ամենայն լինելութեան ժամանակաց եւ տարերց, ջերմու-
թեան եւ ցրտութեան, ցամաքութեան⁴ եւ խոնաւութեան, լուսոյ եւ խաւարի.
եւ ունի յինքեան զամենայն բովանդակապէս. եւ որք խնդրեն ի նմանէ ար-
ժանաւորապէս՝ տայ եւ լնու զամենայն կատարելապէս ըստ իւրաքանչիւր
ուրութ պիտոյից եւ կամաց»:

16 Չոր եւ իւր իսկ⁵ ուսեալ զայս ամենայն ի մանկութենէ⁶ իւրմէ անաւ-
րենն Վարազվաղան՝ քաջ գիտէր. բայց ի նախանձ անաւրենութեան ընկղ-
մեալ ընդ աներոյն՝ խորհէր ի միտս իւր այրն աստուածուրաց, սաղրելով
նմա դիւին, որ միացեալ ներկեալ էր ի սրտի նորա, թէ «Իմաստս այս իմ եւ
ջանս եւ արարուած՝ երկուց իրաց առիթ է ինձ բարւոյ. կա՛մ հաւանի աշ-
խարհն Հայոց եւ ուրանայ՝ մեծաց պարգեւաց եւ պատուոյ արժանի լինիմ
յԱրեաց, որպէս հաւատարիմ նախագիւտ եւ աւգտացոյց այսպիսի կարեւոր

1 Ձ. լուսանցքում ունի նորա

2 Ձ. ամենեցուն. ԲԳՄ. յամենեցունց

3 ԲԳՄ. եւ (թեպէտ) բազում թախանձանօք

4 ՏՏ. եւ ցամաքութեան

5 ՏՏ. չիք իսկ

6 Ձ. ի մանկութենէ